ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2026 թվականի թիվ 74-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 21-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

2026 թվականի մայիսի 20-ին քաղաքացի Տիգրան Մուրադյանի դիմումի հիման վրա հարուցված թիվ 1 վարչական վարույթի շրջանակում անցկացված լսումների ընթացքում «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) տնօրենը հայտնել է, որ Ընկերության կողմից հեռարձակվող «ԼԱՎ ԷՖ ԷՄ» լսողական ծրագրի եթերում չեն հնչում ելքային տվյալները, մասնավորապես՝ ռադիոկայանի անվանումը կամ այն նույնականացնող այլ տվյալներ:

Վերոնշյալ հանգամանքի վերաբերյալ Հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության կողմից ներկայացվել է զեկուցագիր, որով առաջարկվել է քննարկել առերևույթ խախտման փաստի կապակցությամբ վարչական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ 1 վարչական վարույթի լսումների ընթացքում ի հայտ եկած հանգամանքները, որոնք պարունակում են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2026 թվականի մայիսի 21-ին հարուցել է թիվ 19 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 21.05.2026թ. թիվ Ե/04/04.1/376-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ որևէ բացատրություն կամ պարզաբանում չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

1) *տեսալսողական մեդիածառայություն մատուցող*՝ (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

2) *կարգավորող պետական մարմին*՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Հեռարձակողները պարտավոր են ամեն օր եթերում ներկայացնել իրենց անվանումները, խորհրդանիշները, իսկ լսողական ծրագրեր հեռարձակողը՝ ազդականշերը:

2. Հեռարձակողները պարտավոր են՝

1) տեսալսողական հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ հեռարձակել տվյալ ընկերության խորհրդանիշը, բացառությամբ գովազդային հաղորդումների.

2) յուրաքանչյուր հեռարձակվող հաղորդման ավարտին նշել (հայտարարել) տվյալ տեսալսողական հաղորդման արտադրողի մասին տեղեկություններ.

3) հանդես գալ հեղինակազորման հայտում նշված անվանմամբ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձը Հեռարձակողի կարգավիճակ ստանալու համար կարգավորող պետական մարմին է ներկայացնում հեղինակազորման հայտ, որում նշվում են՝

1) հայտատուի անվանումը.

2) իրավաբանական անձի գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը.

3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը.

4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

5) տեսալսողական ծրագրի անվանումը.

6) հայտը ներկայացնելու ժամանակաթիվը.

7) հայտատուի ստորագրությունը:»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2025 թվականի հունիսի 07-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ ք.Երևան, 106.9 ՄՀց հաճախականություն, լիցենզիայի սերիան, համարը՝ ՌՀ N 366, գործողության ժամկետը՝ 07.06.2025թ.-07.06.2032թ.):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

2026 թվականի ապրիլի 20-ին Հանձնաժողով է մուտքագրվել քաղաքացի Տիգրան Մուրադյանի դիմումը, որով բարձրացվել է «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության կողմից 106.9 ՄՀց հաճախականության օգտագործման մրցույթի լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորությունների կատարման հարցը:

Հիմք ընդունելով նշված դիմումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով՝ Հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 20-ին հարուցել է թիվ 1 վարչական վարույթ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների առերևույթ խախտման հատկանիշներով:

Վարչական վարույթի շրջանակներում նշանակվել են վարչական վարույթի լսումներ, որոնք կայացել են 2026 թվականի մայիսի 20-ին: Լսումների ընթացքում իրականացվել է դիմումով ներկայացված հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Թիվ 1 վարչական վարույթի լսումների ընթացքում «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության տնօրենը ներկայացրել է պարզաբանումներ՝ կապված Ընկերության կողմից հեռարձակվող լսողական ծրագրի հեռարձակման առանձնահատկությունների հետ:

Վերջինս հայտնել է, որ «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության «ԼԱՎ ԷՖ ԷՄ» լսողական ծրագրի եթերում չեն հայտարարվում ելքային տվյալները, մասնավորապես՝ չի հնչում ռադիոկայանի անվանումը կամ այն նույնականացնող այլ տեղեկություն:

Հաշվի առնելով, որ վարչական վարույթի լսումների ընթացքում ի հայտ եկած նշված հանգամանքները պարունակում են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ, և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 21-ին «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության տնօրենն ինքն է հայտնել տվյալ տեղեկատվությունը, և Հանձնաժողովը «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության տնօրենի կողմից հրապարակված տվյալների արժանահավատության վերաբերյալ կասկածներ չունի, ինչպես նաև վարչական վարույթի նյութերով չեն հայտնաբերվել հանգամանքներ, որոնք կարող էին վկայել ներկայացված տեղեկատվության կեղծ կամ իրականությանը չհամապատասխանելու մասին:

Բացի այդ, Հեռարձակողին հնարավորություն է տրվել հարուցված վարչական վարույթի շրջանակում ներկայացնել բացատրություններ և պարզաբանումներ «ԼԱՎ ԷՖ ԷՄ» լսողական ծրագրի եթերում ելքային տվյալները չներկայացնելու, ինչպես նաև Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների իմպերատիվ պահանջը չկատարելու հանգամանքների և պատճառների վերաբերյալ: Սակայն Հեռարձակողը չի ներկայացրել որևէ պարզաբանում:

Հանձնաժողովը նաև անհրաժեշտ է համարում արձանագրել, որ կարգավորող պետական մարմինը պարտավոր է օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում վերահսկողություն իրականացնել Օրենքի պահանջների պահպանման նկատմամբ և պատշաճ արձագանքել իրավախախտումների վերաբերյալ ստացված տեղեկություններին: Հետևաբար, Օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ ստացված տեղեկատվության պայմաններում Հանձնաժողովը պարտավոր էր ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ համապատասխան հանգամանքները պարզելու և դրանց իրավական գնահատական տալու նպատակով:

Հեռարձակողը, հանդիսանալով լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող, պարտավոր է տեղյակ լինել Օրենքի կարգավորող դրույթների մասին և պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ:

Օրենքը հստակ սահմանում է՝ ինչպիսի վարքագիծը կարող է առաջացնել պատասխանատվություն, ինչպիսի միջոցներ կարող են կիրառվել, և ելնելով վերոգրյալից՝ Հեռարձակողները կարող են կանխատեսել իրենց գործողությունների և անգործության իրավական հետևանքները:

Հետևաբար, հիմք ընդունելով վերը նշված փաստական հանգամանքները՝ արձանագրում ենք, որ «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «ԼԱՎ ԷՖ ԷՄ» լսողական ծրագրի եթերում չեն հայտարարվում ելքային տվյալները՝ ազդականչերը, այսինքն՝ չի հնչում ռադիոկայանի անվանումը կամ այլ նույնականացնող հատկանիշ, որն էլ հանդիսանում է Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջի խախտում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողի կողմից ամեն օր եթերում իր ելքային տվյալները չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Ռադիո Վայբ» ՍՊ ընկերության պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ.ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2026թ. հունիսի 22
ք.Երևան